Հավելված
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի
«03» 08 2018թ. թիվ 609-Ա հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Հայաստանի Հանրապետության ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի (հանձնաժողով) նիստի

3-ը օգոստոսի 2018 թվականի քաղաք Երևան

Մասնակցում էին՝

Հ.Արշակյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ	հանձնաժողովի նախագահ
Գ.Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի կապի և հեռահաղորդակցության վարչության պետ	հանձնաժողովի նախագահի տեղակալ
Լ.Հակոբյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի կապի և հեռահաղորդակցության վարչության առաջատար մասնագետ	հանձնաժողովի քարտուղար
Լ. Ոսկանյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ	հանձնաժողովի անդամ
Գ.Զաքարյան	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինված ուժերի կապի և ավտոմատ կառավարման համակարգի վարչության պետի տեղակալ	հանձնաժողովի անդամ
Ա.Կարաբախցյան	Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության վարչության պետի տեղակալ	հանձնաժողովի անդամ
Գ.Մկրտչյան	Հայաստանի Հանրապետության ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ	հանձնաժողովի անդամ
Ա.Մեսրոպյան	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության գերատեսչական իրավական ակտերի փորձաքննության և գրանցման բաժնի առաջատար մասնագետ	հանձնաժողովի անդամ
Գ.Գրիգորյան	Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման	հանձնաժողովի

	զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ինովացիոն քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ	անդամ
Հ.Աբրահամյան	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության օպերատիվ կառավարման վարչության կապի և ազդարարման բաժնի պետ, փ/ծ գնդապետ	հանձնաժողովի անդամ
Կ.Կուրբանյան	«Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ	հանձնաժողովի անդամ

Հրավիրված էին՝

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ներկայացուցիչ՝ աշխատակազմի հեռահաղորդակցության վարչության պետ՝ Գ. Գևորգյանը և ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Ֆ.Սոլոմոնյանը

Բացակայում էին՝

«Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական ապահովման տնօրեն՝ Գ.Սիմոնյանը և ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Ֆ.Սոլոմոնյանը

Օրակարգում ընդգրկված հարցերը.

Քննարկել՝

1. ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված Կառավարական նշանակության ՌԷՄ-ների օգտագործման համար նախատեսված ցանկից 811-821ՄՀց և 852-862ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթները առևտրային նպատակով առանձնացնելու հնարավորության հարցը:
2. ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ռադիոհաճախականությունների ցանկից 3600-3700ՄՀց ռադիոհաճախականությունների շերտն առևտրային նպատակով առանձնացնելու հնարավորության հարցը:
3. ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ռադիոհաճախականությունների ցանկից 1765-1785ՄՀց և 1860-1880ՄՀց ռադիոհաճախականութունների շերտերն առևտրային նպատակով առանձնացնելու հնարավորության հարցը:
4. Այլ հարցեր:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Արշակյանը առաջարկեց հաստատել օրակարգը և քննարկել օրակարգում ընդգրկված հարցերը:

Հանձնաժողովի անդամների կողմից հաստատվեց օրակարգը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ Գ.Խաչատրյանը ներկաներին տեղեկացրեց.

1.Օրակարգի 1-ին կետով Կառավարական նշանակության ՌԷՄ-երի շահագործման համար նախատեսված ցանկից 811-821ՄՀց և 852-862ՄՀց ռադիոհաճախականությունները առևտրային նպատակով քաղաքացիական նշանակության ՌԷՄ-երի շահագործման համար առանձնացնելու վերաբերյալ շահագրգիռ գերատեսչությունների կողմից առաջարկություններ և առարկություններ չեն ստացվել, բացառությամբ ՀՀ պաշտպանության նախարարության առաջարկից:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Գ.Զաքարյանը տեղեկացրեց, որ սկզբունքորեն դեմ չեն վերը նշված ռադիոհաճախականությունները քաղաքացիական նշանակության ՌԷՄ-երի շահագործման համար առանձնացնելուն, պայմանով, որ հետագայում փոխադարձ խանգարումները բացառելու և էլեկտրամագնիսական համատեղելիությունը ապահովելու նպատակով անցկացվեն չափումներ՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝ ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված Կառավարական նշանակության ՌԷՄ-ների օգտագործման համար նախատեսված հաճախականությունների ցանկից 811-821ՄՀց և 852-862ՄՀց ռադիոհաճախականությունները առանձնացնել քաղաքացիական նշանակության ՌԷՄ-ների շահագործման համար՝ հաշվի առնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված վերընշված առաջարկությունը:

2. Օրակարգի 2-րդ կետով՝ ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ռադիոհաճախականությունների ցանկից 3400-3900ՄՀց ռադիոհաճախականությունների շերտից 3600-3700ՄՀց ռադիոհաճախականությունների շերտը առևտրային նպատակով քաղաքացիական նշանակության ՌԷՄ-երի շահագործման համար առանձնացնելու վերաբերյալ շահագրգիռ գերատեսչություններից առարկություններ չեն ստացվել:

Հանձնաժողովի անդամ ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ Ա.Կարաբախցյանը տեղեկացրեց, որ ներկայումս իրենց գերատեսչության կողմից 3600-3700ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթից շահագործվում է 3650-3700ՄՀց ռադիոհաճախականությունների շերտը, որը կշարունակվի մինչև 2022 թվականը, և

- առաջարկեց առանձնացնել 3600-3650ՄՀց ռադիոհաճախականությունների շերտը քաղաքացիական նշանակության ՌԷՄ-ների շահագործման համար:

Հանձնաժողովի անդամ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Գ. Զաքարյանը տեղեկացրեց, որ 3600-3700ՄՀց ռադիոհաճախականությունների շերտը շահագործվում է ՀՀ զինված ուժերի կողմից, և մինչև քաղաքացիական նշանակության ՌԷՄ-ների շահագործման համար առաանձնացնելն անհրաժեշտ է «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացնել էլեկտրամագնիսական իրավիճակների չափումներ և արդյունքների մասին միչև ս.թ. սեպտեմբերի երրորդ տասնօրյակ ներկայացնել առաջարկություն:

Քննարկումների արդյունքում որոշվեց հարցին անդրադառնալ ստացված արդյունքները ամփոփելուց հետո:

3.Օրակարգի 3-րդ կետով ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ռադիոհաճախականությունների ցանկից 1765-1785ՄՀց և 1860-1880ՄՀց ռադիոհաճախականութունների շերտերն առևտրային նպատակով քաղաքացիական նշանակության ՌԷՄ-երի շահագործման համար առանձնացնելու վերաբերյալ շահագրգիռ գերատեսչություններից առարկություններ չեն ստացվել:

Քննարկումների արդյունքում որոշվեց ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ցանկից 1765-1785ՄՀց և 1860-1880ՄՀց ռադիոհաճախականութունները առանձնացնել քաղաքացիական նշանակության ՌԷՄ-ների շահագործման համար:

Հայաստանի Հանրապետության
տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ-
Հայաստանի Հանրապետության
ռադիոհաճախականությունների կառավարման
համակարգող հանձնաժողովի նախագահ **Հ.ԱՐՇԱԿՅԱՆ**

Հանձնաժողովի քարտուղար **Լ.ՀԱԿՈԲՅԱՆ**

08.08.2018թ.